

ԶԱՐՈՒՀԻ ՈՍԿԱՆՑԱՆ

ԵՊՀ ռոմանական բանասիրության ֆակուլտետի ասիստենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու

E-mail: zarugi@yahoo.fr

ՀՏԴ 811.25

**ԱԼԲԵՐՏՈ ՍՈՐԱՎԻՑԱԻ «ՉՈՉԱՐԱ» ՎԵՊԻ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ
ՌՈՒՄԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՅԻՆ**

Բանալի բառեր. լեզվական նորմա, բառապաշար, բառային միավոր, թարգմանություն, լեզվամշակութային, լեզվաոճական, դարձվածային միավոր, մակբայ:

Ключевые слова: языковая норма, словарная единица, словарный состав, перевод, лингвокультурный, лингвостилистический, фразеологическая единица, наречие.

Key words: linguistic standard, vocabulary, lexical unit, translation, linguocultural, stylistic, idiom, adverb.

Լեզվական նորման տվյալ լեզվական համակարգի բաղադրիչների կանոնավոր և ընդունված ձևով գործածությունն է, որը հանդես է գալիս որոշակի առանձնահատկություններով: Ինչպես նշում է Լ. Եզեկյանը «գրական բառաշերտի մեջ են մտնում այն բառերը, որոնք գործ են ածվում գրական լեզվի չափորոշիչների պահանջներով, նրա կիրառության սահմաններում: Գրական շերտի բառերը հիմնականում օգտագործվում են գիտական, վարչական, պաշտոնական, հրապարախոսական և գեղարվեստական գրականության մեջ, առավելապես հեղինակային խոսքում, երբեմն նաև առօրյա-խոսակցական ոճերում՝ առանձին կերպարների խոսքի ոճավորման նպատակով»¹:

Հայերենն իր օրինաչափություններով ու առանձնահատկություններով, զարգացման տարբեր փուլերում նորմավորված լեզու է: Հայտնի է, որ գեղարվեստական լեզվի բառապաշարը գերակշիռ մասով համապատասխանում է հայերենի գրական նորմային, մասամբ պարունակում է ոչ գրական համարվող բառեր և քերականական ձևեր: «Մի կողմից մեր գեղարվեստական գրականության լեզուն մշակվում է գրական լեզվի օրինաչափություններով, իր մեջ առնելով նաև

¹ Լ. Կ. Եզեկյան, Հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ., 2007, էջ 138-140:

ժողովրդախոսակցական լեզվի բառեր, դրանք փոփոխելով կամ անփոփոխ թողնելով, մյուս կողմից ստեղծվում է ժողովրդախոսակցական լեզվով գրականությունը²:

«Չոչարա» վեպը Ա. Մորավիայի ամենահաջողված ստեղծագործություններից է և աչքի է ընկնում ոչ միայն գեղարվեստական բարձր արժանիքներով, ժամանակի սրված զգացողությամբ ու հոգեբանական խոր ներթափանցումներով, այլև լեզվառական բարձր կուլտուրայով և հարուստ բառապաշարով:

Ա. Մորավիայի «Չոչարա» վեպի հայերեն թարգմանությունը կատարվել է անցյալ դարի 60-ական թվականներին, և բնական է, որ այդ թարգմանությանը բնորոշ է տվյալ ժամանակի գրական հայերենի նորմային համապատասխան բառային գործածությունը, թեև պետք է նշել, որ «Չոչարայի» լեզուն, մասնավորապես բառապաշարն, ընդհանուր առմամբ, կարելի է բնորոշել որպես ժողովրդախոսակցական:

Ինչպես հայտնի է գեղարվեստական գրականության թարգմանությունը ինքնին բարդ և բազմաստիճան գործընթաց է, որը բնորոշվում է մի շարք կանոններով և օրինաչափություններով, որոնք պետք է ապահովեն թարգմանության տեքստի լիարժեք գործառական և ոճական համապատասխանությունը բնագրին: Վեպի թարգմանության լեզուն ուսումնասիրելիս սակայն, հանդիպեցինք մի շարք դեպքերի, որոնցում առկա են գրական լեզվի կանոններից բառային ակնհայտ շեղումներ:

Քննենք հետևյալ օրինակները:

- *Խեղճ աղջիկ, քոռանամ էս, խեղճ Ռոզետտա (էջ 376) // Poveretta, povera figlia, povera Rosetta, quanto mi dispiace, quanto mi dispiace (p. 286) // - Бедняжка, бедная девочка, бедная Розетта, несчастная, вот несчастная (с. 605):*

Ինչպես հայտնի է «քոռանամ էս կամ քոռանան աչքերս» դարձվածային միավորը առավելապես բնորոշ է խոսակցական լեզվին, մինչդեռ բնագրի «mi dispiace» (*ցավում եմ կամ՝ ինչ ափսոս*) արտահայտությունը իտալերենի գրական բառապաշարի շերտին է պատկանում: Ռուսերենում այդ արտահայտությունն առհասարակ թարգմանված չէ:

Բայց չէ, բոլորն էլ հույսները կորցրած գլադագլուդաներ էին... (էջ 10) // ...ma no, erano certi disperati... (p. 10) // ...а то ведь всякая шантроня... (с. 309):

² Էդ. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1984, էջ 116:

Գյաղագյուղա բառը, որի առաջին *գյաղա* բաղադրիչը նշանակում է *ծառա* (հնգ.), այնուհետև *սինլքոր*, *տմարդի*, *տականք*, *լակոս*³, բնորոշ է միայն ժողովրդախոսակցական լեզվին: Ռուսերեն թարգմանության *шантропа* տարբերակը ժողովրդախոսակցական, նախատական բառ է և նշանակում է *некчемный, никуда не годный человек*: Ի դեպ, այս բառը հետաքրքիր ծագում ունի. այն ներթափանցել է ռուսերենի բառապաշար որպես փոխառություն ֆրանսերենից: Ֆրանսիայի դպրոցների եկեղեցական երգչախմբերի դասատուները օգտագործում էին (*ne*) *chantera pas* (*չի երգի*) արտահայտությունը՝ ոչ փութաջան աշակերտներին նախատելու նպատակով: Իտալերենի գրական բառաշերտի *disperati* բառը նշանակում է *հուսահատ*, *անհույս*, *անուղղելի*, *անսփոփելի*. խոսակցական լեզվում ստանձնում է *խեղճ*, *անհաջող մարդ* իմաստները:

Գեղարվեստական գրականության թարգմանությունը արտացոլում է թարգմանչի ոչ միայն լեզվական գիտելիքների ամբողջությունը, այլև տվյալ ժողովրդի պատմամշակութային, երկրագիտական, բարոյաեռոգեբանական արժեքների իմացությունը: Բնչպես իր գրքում նշում է իտալացի հայտնի գրող ու թարգմանիչ Ումբերտո Էկոն «թարգմանիչը հեղինակային բնագիրը մշակութային մի հարթությունից տեղափոխում է մշակութային մի այլ հարթություն՝ գտնվելով լեզվամշակութային ուրիշ դաշտում»[2]: Բնչպես կարող ենք նկատել հետևյալ օրինակներում թարգմանիչներին հաջողվել է պահպանել բն

Բսկ փողն ինչեր չի անի, ամենաջահել աղջիկն անգամ վերնազգեստը վեր կքշտի (էջ 6) // *Coi soldi, si sa, si ottiene tutto, persino che una sposina alzi la gonnella* (p. 7) // *Известное дело, деньгами всего можно добиться, за деньги даже молодуха задерет юбку* (с. 306):

Քշտել միավորը պատկանում է բառապաշարի խոսակցական շերտին և նշանակում է *թները*, *փեշերը վերն հավաքել*⁴ մինչդեռ բնագրի *alzare* բայը պարզապես նշանակում է *բարձրացնել* և պատկանում է գրական շերտին: Ռուսերենի *здерать* տարբերակն ևս խոսակցական բառաշերտի միավոր է:

Խոհանոցում ջուր չկար, ամեն ինչ մնում էր անվա, կերակուրը պատրաստում էր մի կերպ, փփայլ-թափայլ (էջ 59) // *...non c'era mai acqua e non si lavava niente e si cucinava in fretta, come veniva veniva* (p. 47) // *воды в кухне не было, и хозяйка никогда ничего не мыла, стряпала впопыхах, как попало* (с. 350):

Բերված օրինակում *ափայլ-թափայլ* արտահայտությունը նշանակում է *շտապով*, *հապճեպորեն*, բնորոշվում է որպես խոսակցական լեզվի միավոր,

³ Է. Բ. Աղայան, նշվ. բառարան, էջ 248:

⁴ Է. Բ. Աղայան, նշվ. բառարան, էջ 1574:

մինչդեռ բնագրի *in fretta* կապակցությունը՝ *արագ, հապճեպ* իմաստներով, լեզվի գրական շերտին պատկանող տարր է: Ռուսերենի *впопыхах* բացատրվում է իբրև *торопливо, задыхаясь от поспешности* և նույնպես կիրառվում է խոսակցական լեզվում:

- Հո քո Ռոզետտային չ են ուտելու: Բսկ ֆաշիստները, ջա՛նս, ամեն ինչ ունեն... (էջ 68) // “Be”, mica se la *mangerebbero*, Rosetta. E i *fascisti, comare mia, ci hanno tutto...* (p. 53) // - Не *съедают* они твою Розетту. А у *фашистов, дорогая моя, есть все...* (с. 357) :

Ինչպես բնագրում այնպես էլ հայերեն ու ռուսերեն տարբերակներում փոխաբերական իմաստով կիրառվել են *ուտել* և *съесть* բայերը, որոնք լայն գործածություն ունեն հատկապես խոսակցական լեզվում, արտահայտում են հետևյալ իմաստը՝ *որևէ մեկին վնաս պատճառել*, իսկ *ջանս* կոչականը *ջան* փաղաքշական բառի փոխանվանական տարբերակն է՝ *սիրելիս, հարազատս* նշանակությամբ և փոխարինում է *comare* բառին, որի հիմնական իմաստն է՝ *կնքամայր*, ինչպես նաև՝ *դրացի, բարեկամուհի, հետաքրքիր և չարախոս կին*⁵: Ռուսերենում օգտագործվել է չեզոք՝ *дорогая* տարբերակը:

Մեր ուսումնասիրության ընթացքում բառային միավորների վերլուծության հետ մեկտեղ փորձել ենք անդրադառնալ նաև դարձվածային միավորների գործածությանը, որոնք ուսումնասիրության լայն հնարավորություն են ընձեռում: Ինչպես հայտնի է դարձվածային միավորները ամեն մի ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են, արտահայտում են լեզվի ազգային ինքնատիպությունն ու յուրահատկությունը: Իրենց պատկերավոր մտածողության շնորհիվ, դարձվածային միավորները արտահայտում են ժողովրդի պատմական հարուստ կենսափորձը, նրա պատկերացումը առարկայական աշխարհի որակների և երևույթների մասին, վերաբերմունքը՝ մարդկային հարաբերությունների նկատմամբ: Դարձվածային միավորները մեծ դեր ունեն խոսքի գեղեցիկ դրսևորման մեջ մի կողմից, խոսքին հաղորդում են պատկերավորություն, արտահայտչականություն, դիպուկություն, մյուս կողմից ազատում են խոսքը միապաղաղությունից, միօրինակությունից և չորությունից:

Ստորև ներկայացնենք մի քանի օրինակ ևս, որոնք միշտ չէ, որ պահպանել են բնագրի գրական լեզվի առանձնահատկությունները:

- Սանամե՛ր Գոնչեստա, եկեք գուր տեղը դես-դեն չրնկնենք (էջ 64) // *Comare Concetta, comare Concetta, facciamoci a capire* (p. 50) // Мы *отлично*

⁵ Հ. Վահան վրդ. Օհանեան, նշվ. բառարան, էջ 169:

понимаем друг друга, кума Кончетта (с. 354):

*Դեսուդեն մակբայը նշանակում է այս ու այն կողմ: Դեսուդեն ընկնել՝ այս ու այն կողմ ընկնել, թափառել, ինչպես նաև ելք, ճար փնտրել, խոսքը ծամծմել, պատեպատ ընկնել, որոշակի չասել: Բնագրի *facciamoci a capire* արտահայտությունը թարգմանությամբ կարտահայտի հետևյալ իմաստ՝ «եկե՛ք միմյանց հասկանանք», և անտարակուսելի է, որ հայերենում տեղ գտած տարբերակը միանգամայն ճշգրիտ և հստակ ներառում է իր մեջ բնագրի արտահայտած իմաստը: Իմաստային տեսակետից ուշադրություն է գրավում ռուսերեն տարբերակը. *Мы отлучно понимаем друг друга* արդեն իսկ արտացոլում է միմյանց հասկանալու իմաստ, այսինքն՝ հետագա խոսակցություն և պայմանավորվածություն կարող է և չհետևել, մինչդեռ բնագրի *facciamoci a capire եկե՛ք միմյանց հասկանանք* թարգմանությունն արտահայտում է որպես ընդհանուր լեզու գտնելու և որոշակի պայմանավորվածության գալու կոչ. միայն պարզ չէ՝ խոսակիցները կգա՞ն ընդհանուր հայտարարի, թե՞ ոչ: Մյուս կողմից՝ այս տարբերակը կարելի է դիտարկել նաև որպես ակնարկ, որի միջոցով գրուցակիցը հասկացնում է Կոնչետային, որ նրա համար ամեն բան արդեն իսկ պարզ է: Կարծում ենք, որ հայերեն տարբերակը լավագույնս արտացոլում է բնագրի իմաստը:*

«Չոչարա» վեպի հայերեն թարգմանությունը վկայում է թարգմանչի լեզվի տարբեր շերտերի կատարյալ իմացության և տիրապետման մասին, ինչի շնորհիվ վեպում անգուգական կերպով համադրվում են գրական և խոսակցական շերտերին բնորոշ միավորներն ու արտահայտությունները: Ուսումնասիրենք հետևյալ օրինակները:

Դուք, Ֆիլիպպո, առևտուր եք անում, Սևերինոն դերձակ է, իսկ մենք... մենք էլ հափռուչփռու ենք անում ... էջ (155) // Voi, Filippo, fate il commerciante, Severino fa il sarto e noialtri ci arrangiamo... (p. 119) // Вы, Филиппо, занимаетесь торговлей, Северино портной, ну а мы... мы устраиваемся как можем... (с. 428):

Հափռուչփռու անել արտահայտությունը ևս զուտ խոսակցական բնույթի է նշանակում է «դեսից-դենից գտնել՝ ձեռք բերել, հայթայթել, հափշտակել, գողանալ»⁶, մինչդեռ բնագրի *arrangiarsi* բայը թարգմանվում է *հարմարվել* և պատկանում է լեզվի գրական շերտին: Ռուսերեն տարբերակը լիովին համարժեք է բնագրին:

Շուկայի առևտրականներից ոմանք ինձ նույնիսկ շոռ աչքով էին նայում...(էջ 5) // Qualcuno di quei venditori mi faceva anche la corte... (p. 6) // Некоторые продавцы пытались ухаживать за мной... (стр. 305)

Շոռ աչքով նայել արտահայտության *շոռ* բաղադրիչը, որը տվյալ

⁶ Է. Բ. Աղայան, նշվ. բառարան, էջ 852:

դեպքում նշանակում է «վավաշոտ, ցանկասեր հայացքով նայել»⁷ ժողովրդախոսակցական լեզվում իմաստի հիմնական կրողն է, մինչդեռ բնագրի *fare la corte* «սիրահետել, կնոջ հետևից քարշ գալը», յուրահատուկ է գրական լեզվին: Ռուսերեն տարբերակում *пытались ухаживать за мной* արտահայտությունը իտալերեն թարգմանվում է հենց *fare la corte*:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հայերենում տեղ գտած գրական նորմայից որոշակի շեղումները «Չոչարա» վեպի ժողովրդախոսակցական բառապաշարի առանձնահատկությունն ընդգծելու նպատակով թարգմանիչների ընտրության արդյունք են, որից թարգմանությունը միայն շահել է:

2. Ոսկանյան

Ալբերտո Մորավիայի «Չոչարա» վեպի հայերեն և ռուսերեն թարգմանությունների բառային միավորների համապատասխանությունը գրական նորմային Ամփոփում

Սույն հոդվածի շրջանակներում քննության է առնվում Ալբերտո Մորավիայի «Չոչարա» վեպի հայերեն թարգմանության բառային միավորների համապատասխանությունը գրական նորմային: Հիմք ընդունելով, որ լեզվի գրական նորման տվյալ լեզվական համակարգի բաղադրիչների կանոնավոր և ընդունված ձևով գործածությունն է փորձ է արվել վերլուծել և համեմատել եկու լեզուների թարգմանությունների լեզուն՝ վերլուծելով նաև լեզվամշակութային առանձնահատկությունները: Քննության արդյունքում եկանք այն եզրահանգման, որ հայերենում տեղ գտած գրական նորմայից որոշակի շեղումները թարգմանիչի ընտրության արդյունք են և առավել ցայտուն են ընդգծել «Չոչարա» վեպի ժողովրդախոսակցական բառաշերտի առանձնահատկությունները:

3. Восканян

Соответствие словарных единиц в армянском и русском переводах романа Альберто Моравия «Чочара» литературной норме

Резюме

Предметом исследования данной статьи является изучение соответствия словарных единиц в армянском и русском переводах романа Альберто Моравия «Чочара» литературной норме. Основываясь на тот факт, что языковая норма определяется использованием лингвистических компонентов в регулярном и приемлемом порядке, была предпринята попытка исследовать и сравнить языки

⁷ Ա. Մ. Մուրիայան, Ս. Ա. Գալստյան, նշվ. բառարան, էջ 1117:

переводов, анализируя также их лингвокультурные особенности. В результате исследования мы пришли к выводу, что определенные отклонения от литературной нормы в армянском языке являются результатом выбора переводчика и лучше подчеркивают особенности народно разговорного языка романа «Чочара».

Z. Voskanyan

The correspondence of the lexical units in the Armenian and Russian versions of “Two women” by Alberto Moravia to the linguistic standard

Summary

Within the present article we studied the correspondence of the lexical units in the Armenian version of “Two women” by Alberto Moravia to the linguistic standard.

Based on the definition that the linguistic standard of a language is the regular and assumed use of the linguistic system units, we tried to compare the translation of the two languages by analyzing the linguocultural features. During the studies we came to conclusion that some departures from the linguistic standard in the Armenian version are the translator’s choice that highlighted the features of the spoken language vocabulary of the novel “Two women”.